

ՀՏԴ 338.2:378(479.25)

**ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ ԱՆՁԵՌՆՄԻՆԵԼԻ  
ՖՈՆԴԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ  
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

**ՌՐԲԵՐՏ ԽԱԶԱՏՐՅԱՆ**

*Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան*

Հոդվածում քննարկվում է հետազոտական համալսարաններում անձեռնմխելի ֆոնդերի ստեղծման և գործառման ռազմավարական կարևորության մասին: Նմանատիպ ֆոնդերը կարող են ապահովել ՀՀ բուհերում որակյալ հետազոտությունների իրականացման համար անհրաժեշտ գիտահետազոտական միջավայրի շարունակական զարգացումը և ֆինանսական միջոցների կայունությունը:

**Բանալի բառեր.** հետազոտական համալսարաններ, անձեռնմխելի ֆոնդեր, բուհերի ֆինանսական կառավարում, բարձրագույն կրթության ֆինանսավորում, գիտության ֆինանսավորում, գիտական անձնակազմը:

ՀՀ բարձրագույն կրթության և գիտության ոլորտներում իրականացվող բարեփոխումների հաջողության գրավականներից կարող են լինել բուհերի և գիտահետազոտական կազմակերպությունների համակարգային ու ինստիտուցիոնալ համագործակցությունը, արդյունավետ ռազմավարական կառավարումն ու կանոնադրական գործառույթների ապահովման համար այլընտրանքային ֆինանսական աղբյուրների ներգրավումը, ներառյալ անձեռնմխելի ֆոնդերի ստեղծումը և ֆինանսական կայունություն ապահովող կառուցակարգերի գործառումը:

Հաշվի առնելով հետազոտական համալսարանների առանցքային դերն ու կարևորությունը գիտելիքահենք տնտեսության զարգացման հեռանկարում՝ սույն հոդվածի նպատակն է քննարկել ՀՀ-ում հետազոտական համալսարանների անձեռնմխելի ֆոնդերի ստեղծման ու գործառման ռազմավարական նշանակությունը և ներկայացնել նմանատիպ ֆոնդերի հայեցակարգային շրջանակը գիտահետազոտական, կրթական ու նորարարական ոլորտների առաջընթացի խթանման տեսանկյունից: Սույն նպատակը բխում է նաև ՀՀ գիտահետազոտական համակարգի արդյունավետության բարձրացման ուսումնասիրության անհրաժեշտությունից և ՀՀ պետական բուհերում գիտահետազոտական գործունեության ֆինանսավորման մարտահրավերներից:

Գիտահետազոտական գործունեության ոլորտում առկա խնդիրների վերհանման և վերլուծության նպատակով ուսումնասիրվել է մասնագիտական գրականություն [1-5], ՀՀ 20 պետական բուհերի ռազմավարությունների, գործունեության տարեկան և ֆինանսական հաշվետվությունների, ինստիտուցիոնալ հավատարմագրման ինքնավերլուծությունների ու փորձագիտական զեկույցների և այդ բուհերի պաշտոնական կայքերում հասանելի այլ փաստաթղթերի համապարփակ ուսումնասիրությունը: Ի լրումն ՀՀ բուհերի փաստաթղթերի և գիտահետազոտական գործունեության շրջանակն արտացոլող այլ նյութերի ուսումնասիրության՝ իրականացվել են նաև հարցազրույցներ այդ համալսարանների գիտական անձնակազմի<sup>1</sup> և գիտության ոլորտի պատասխանատուների հետ: Հարցազրույցների և փաստաթղթային հենքի վերլուծության արդյունքների համակցումը թույլ է տվել դուրս բերել սույն հետազոտության շրջանակում քննարկված խնդիրները և հաստատել առաջադրված դրույթները:

Որպես գիտության համաշխարհայնացման առանցքային դերակատարներ՝ հետազոտական համալսարանները շաղկապում են գիտությունը, կրթությունը և գիտելիքահենք տնտեսությունները: Ավելին, հետազոտական համալսարաններն ստեղծում են մտավոր կապիտալ, կրթում և պատրաստում են են գիտական անձնակազմի նոր սերունդներ, զարգացնում են այդ անձնակազմի գիտական ներուժը, նրանց գիտահետազոտական ու փոխանցելի հմտությունները, տեխնոլոգիական պաշարները, ինչպես նաև նոր գիտելիք են ստեղծում ժամանակակից գիտության ու մրցունակ գիտելիքահենք հասարակության զարգացման համար և ամենակարևորը՝ համաշխարհային մակարդակում հաղորդակցումն ու համագործակցային կապերն ապահովող օղակ են հանդիսանում [5]: Տնտեսական գլոբալ աննախադեպ աճի պայմաններում հետազոտական համալսարանների մրցունակության ապահովման գրավականը հասարակության համար արժեքավոր և գիտական հետազոտությունների իրականացումն է:

Հետազոտական համալսարանների առաքելությունն է գիտահետազոտական և կրթական մրցունակ ծառայությունների մատուցման միջոցով նպաստել սոցիալ-տնտեսական, քաղաքական, աշխարհաքաղաքական և այլ ոլորտների զարգացմանը: Հետազոտական համալսարանները կոչված են ինտեգրելու գիտության ու կրթության համակարգերը և ապահովելու միջազգայնորեն մրցունակ արտադրանք: Հետազոտական համալսարաններն իրենց գործունեությունը ծավալում են գիտահետազոտական,

<sup>1</sup> Գիտական անձնակազմը ներառում է հետևյալ խմբերի ներկայացուցիչներին՝ գիտնականներ, գիտաշխատողներ, գիտամանկավարժական կազմ, գիտական խորհրդատուներ, հետազոտողներ՝ դոկտորանտներ, ասպիրանտներ, հայցորդներ, գիտական աստիճան ունեցող և գիտահետազոտական գործունեությամբ զբաղվող այլ դերակատարներ:

մասնագիտացված և ոլորտի առաջատար այլ կառույցների հետ համագործակցությամբ, որի արդյունքում բարձրացնում են իրենց գործունեության արդյունավետությունը և ընդլայնում են միջազգայնացման շրջանակն ու ճանաչման հնարավորությունները:

ՀՀ-ում հետազոտական համալսարանների ստեղծումը պետք է պետական առաջնահերթություններից և բարձրագույն կրթության ու գիտության ոլորտների պետական քաղաքականության գերակայություններից մեկը դառնա: Հետազոտական համալսարանների միջոցով պետությունն առավել թիրախային ու արդյունավետ կերպով կկարողանա լուծել սոցիալ-տնտեսական, ռազմաքաղաքական և գիտակրթական անվտանգության մի շարք հիմնախնդիրներ: Վերջիններիս լուծումն իր հերթին ենթադրում է, որ հետազոտական համալսարանները պետք է հիմնականում ֆինանսավորվեն ՀՀ կառավարության կողմից և ներառելով առանցքային շահակիցների ու մասնավոր ներդրողների՝ հիմնվելով ֆիդուցիար սկզբունքների վրա:

Հետազոտական համալսարաններն այն առանցքային հաստատություններն են, որոնք ձևավորում և զարգացնում են գիտական անձնակազմի ոչ միայն գործառույթային, այլ նաև գիտահետազոտական գրագիտությունը՝ հիմքեր ստեղծելով հետագա գիտահետազոտական արդյունավետ գործունեության և կրթության ու գիտության ոլորտների զարգացումը խթանող գործընթացներին մասնակցության համար: Ավելին, հետազոտահենք բարձրագույն կրթություն առաջարկող բուհերը պետք է հետազոտական բաղադրիչն ընդգրկեն ուսումնառողների կրթության բոլոր փուլերում և մակարդակներում՝ խթանելով նրանց հետաքրքրությունն ու հանձնառությունը գիտության նկատմամբ, զարգացնելով հետազոտական մեթոդների կիրառման հմտությունները և շահադրդելով զբաղվել գիտահետազոտական գործունեությամբ: Սա միտված է միջազգայնորեն մրցունակ այնպիսի ոլորտային մասնագետներ ու գիտնականներ պատրաստելուն, որոնք ունակ կլինեն արդյունավետորեն առաջարկել գիտական լուծումներ պետական հիմնախնդիրներին, արձագանքելու գլոբալ զարգացումներին ու աշխատաշուկայի պահանջներին և դրսևորելու համապատասխան կարողություններ հետագա մասնագիտական գործունեության մեջ:

2008 թ. ՀՀ կառավարությունը կարևորել է ՀՀ-ում գիտության վրա հիմնված տնտեսության և գիտելիքահենք հասարակության զարգացումը՝ խրախուսելով գիտահետազոտական ոլորտի ռազմավարությունների մշակումն ու իրականացումը: ՀՀ-ում գիտական հետազոտությունների արդյունավետության բարձրացումը մարտահրավեր է հատկապես այն պատճառով, որ ՀՀ կառավարությունը և համապատասխան այլ դերակա-

տարներ թերացել են ինչպես գիտության և կրթության զարգացման տեսլականի մշակման, առաքելության իրականացման, այդ ոլորտների երկարաժամկետ զարգացման երաշխիքների և թիրախային ֆինանսավորման ապահովման, այնպես էլ այդ ոլորտների արդյունավետության գնահատման և դրա արդյունքները գիտահանրամատչելի դարձնելու հարցում:

Հիմնարար հետազոտությունն ու գիտությունն ամենաթանկ ակտիվներն են պետությունների համար: Բարձրորակ հետազոտություն իրականացնելու համար հարկավոր է պետական թիրախային ու լայնածավալ ֆինանսավորում, քանի որ անհրաժեշտ գիտահետազոտական ենթակառուցվածքների ստեղծումն ու սարքավորումների ձեռքբերումը բարձր ծախսատարություն ունեն: Բացի այդ, հիմնարար հետազոտությունը պետական ու հանրային աջակցության կարիք ունի, քանի որ հիմնականում այն հազվադեպ է կարճ ժամանակահատվածում եկամտաբեր լինում, սակայն պետության, հասակարակության և տնտեսության երկարաժամկետ զարգացման տեսանկյունից մրցակցային շատ մեծ առավելություն է ընձեռում: Հետազոտական համալսարաններ հիմնադրելու համար պետական ֆինանսավորումից բացի պետք է ներգրավվեն նաև արտաքին ֆինանսավորման աղբյուրներ, օրինակ՝ գիտության թիրախային ոլորտներին հատկացվող ֆինանսական պաշարների, դրամաշնորհների և մասնավոր ներդրումների, ինչպես նաև անձեռնմխելի ֆոնդերի հիմնադրման և արդյունավետ գործառնման միջոցով՝ միտված ազգային և միջազգային մակարդակներում համագործակցությունների ակտիվացմանը:

ՀՀ բարձրագույն կրթությանը հատկացվող պետական ֆինանսավորման և ֆինանսական աջակցության ցուցանիշները շարունակաբար նվազում են՝ այդպիսով ՀՀ բուհերի համար լրացուցիչ բեռ ու դժվարություններ ստեղծելով ժողովրդագրական ցուցանիշների նվազման և սոցիալ-տնտեսական ճգնաժամային ներկայիս պայմաններում: Ավելին, ազգային մակարդակում գիտելիքահենք տնտեսության զարգացման, գիտություն-կրթություն-նորարարություն շղթայի ամրապնդման և այդ ոլորտների զարգացման հեռանկարները երկարաժամկետ կայունության տեսանկյունից դառնում են անիրատեսական: Այս համատեքստում առավել հիմնավոր է դառնում հետազոտական համալսարանների հիմնադրման անհրաժեշտությունը ՀՀ-ում՝ կրթության ու գիտության համակարգերը փոխկապակցելու, համակարգային և ինստիտուցիոնալ բարեփոխումներ իրականացնելու, գիտահետազոտական և կրթական միջավայրերի փոխկապակցվածությունն ամրապնդելու նպատակով: Բարեփոխումները բարձրագույն կրթության ու գիտության ոլորտներում նշանակում են ոլորտային քաղաքականություններում փոփոխություններ, համակարգային ու ինստիտուցիոնալ վերափոխումներ, տարբեր միջավայրերին ու ոլորտներին

հարմարում: Որպես կանոն՝ բարեփոխումները հանգեցնում են փոփոխությունների (հիմնականում՝ դրական փոփոխությունների)՝ վերջիններս դասակարգելով այնպիսի հերթականությամբ, որը պետք է համապատասխանի ՀՀ-ում տվյալ պատմական ժամանակաշրջանի իրականությանը և առկա պաշարներին:

Գիտակրթական անվտանգության ապահովման տեսանկյունից հետազոտական համալսարանները ռազմավարական նշանակություն ունեն, և այդ համատեքստում անձեռնմխելի ֆոնդերի գործառույժը հնարավորություն է տալիս ամրապնդելու իրենց ֆինանսական կայունությունը, գիտահետազոտական գործունեության համար ապահովելու հավելյալ ֆինանսական ներհոսք, բազմազանեցնելու և հարստացնելու գույքային և նյութատեխնիկական պաշարները: Ֆինանսական կայունության տեսանկյունից պետք է շեշտադրել, որ ՀՀ բուհերին նվիրատվությունների, նվիրաբերությունների, հանգանակությունների կամ կտակի ձևով փոխանցված դրամական կամ գույքային միջոցների տեսքով տրվող աջակցությունը պարբերական բնույթ չի կրում և չի խրախուսվում պետական քաղաքականությամբ: Ավելին, ՀՀ պետական բուհերին տրվող պետական ֆինանսական հատկացումների ցուցանիշները նվազման միտում ունեն հատկապես ճգնաժամային իրավիճակներում: Օրինակ՝ ՀՀ-ում դա պայմանավորված է 2020 թ. COVID-19 նոր համավարակով, պատերազմական և հետպատերազմական իրավիճակներով և դրանցից բխող հնարավոր հումանիտար ճգնաժամով: Նման ռիսկային պայմաններում պետությունը նվազեցնում է բուհերին տրամադրվող ֆինանսական միջոցները՝ դրանք ուղղելով սոցիալ-տնտեսական առաջնահերթ այլ խնդիրների լուծմանը:

Այդ պատճառով բուհերն իրենց հերթին ստիպված են լինում խնայողություններ անելու, բարձրացնելու ուսման վարձավճարները կամ կրճատելու կրթական ու գիտահետազոտական միջավայրերի բարելավմանն ուղղված ծախսերը: Այսինքն՝ բարձրագույն կրթության ոլորտին և բուհերին հատկացվող ֆինանսավորման ցուցանիշների նվազումը կարող է վտանգել կրթության և գիտության ոլորտների երկարաժամկետ զարգացումն ու պետական բուհերի ֆինանսական կայունությունը՝ հանգեցնելով բուհերի գործունեության արդյունավետության, կրթության ու գիտության որակի և մրցունակության նվազմանը: Անձեռնմխելի ֆոնդերը կարող են բուհերին ապահովել որոշակի ֆինանսական կայունությամբ նաև անհաղթահարելի ուժի պայմաններում (օրինակ՝ ՀՀ-ում Covid-19 նոր համավարակի և պատերազմական իրավիճակի պայմաններում):

ՀՀ ժողովրդագրական ցուցանիշների, համապատասխանաբար նաև ՀՀ բուհեր ընդունվողների թվի անկմանը և դրանով պայմանավորված՝

Ֆինանսավորման հոսքերի նվազմանը զուգընթաց ավելանում են համալսարանների ծախսերը: Նշվածը հիմնականում պայմանավորված է մի շարք պահանջներով, ինչպիսիք են մրցունակ կրթական ու գիտահետազոտական միջավայրերի ապահովումը, արդի կրթական ծառայությունների մատուցումը, որակյալ հետազոտությունների իրականացումը, շուկայի հատույթում մրցակիցների թվի ավելացման պայմաններում համալսարանների գրավչության բարձրացումն ու մրցակցային առավելությունների ձեռքբերումը: Գիտակցելով համալսարանների առջև ներկայումս ծառայած ֆինանսական խնդիրները և գնահատելով համալսարանների հետագա ֆինանսական ինքնավարության հեռանկարներն ու ֆինանսական կայունությունն ապահովող կառուցակարգերի գործունեությունը՝ բարձրագույն կրթության պետական քաղաքականության շրջանակում վերջին մի քանի տարիներին քննարկվում է ՀՀ-ում համալսարանների անձեռնմխելի ֆոնդերի հիմնադրման և զարգացման խթանումը՝ ի թիվս ֆինանսավորման աղբյուրների բազմազանեցման այլ տարբերակների:

ՀՀ պետական բուհերի կազմակերպչական տարբեր ձևերը ներկայում ֆինանսական ինքնավարության առավել մեծ հնարավորություններ են ընձեռում, սակայն դրանք բուհերի կողմից լիովին չեն օգտագործվում ռազմավարական և գործառնական մակարդակներում: ՀՀ պետական բուհերը կարող են անձեռնմխելի ֆոնդերի ստեղծմամբ ու դրանց ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարմամբ զգալիորեն թեթևացնել կրթության և գիտության ֆինանսավորման գործառույթը: Այս համատեքստում բուհերի և հետազոտական համալսարանների անձեռնմխելի ֆոնդերը կարող են նաև զգալիորեն օժանդակել անհաղթահարելի ուժի հետևանքով առաջացած ֆինանսական ճգնաժամի հաղթահարմանը, արդյունավետորեն լուծել առաջացած առաջնահերթ ինստիտուցիոնալ ֆինանսական խնդիրները և ապահովել ռազմավարական նպատակների իրականացումը:

Անձեռնմխելի ֆոնդերի ստեղծումն ու գործառումը կարող են նպատակաուղղվել բուհերում որակյալ հետազոտությունների իրականացման համար անհրաժեշտ գիտահետազոտական միջավայրի և ֆինանսական միջոցների ապահովմանը: Բուհերի անձեռնմխելի ֆոնդերի եկամուտների աճը հնարավոր է նոր նվիրատվությունների կամ նմանատիպ ակտիվների շարունակական ավելացման շնորհիվ: Դա պայմանավորված է բուհերի կառավարման մարմինների ու ղեկավարության կողմից թիրախային արտաքին շահակիցների ներգրավմամբ, ավելի մեծ թվով կազմակերպությունների հետ փոխշահավետ գործակցությամբ, առկա նվիրատուների ու դոնորների հետ հարաբերությունների ամրապնդմամբ: Նպատակային կապիտալի ձևավորման և օգտագործման, հարկային դաշտում արտոնությունների ու օրենսդրական կարգավորումների, նվիրատուների ու

նվիրաբերողների իրավունքների և իրավասությունների, նվիրատվության ու հարակից այլ հիմնադրույթները կարող են իրավական հիմք ստեղծել ՀՀ բուհերի անձեռնմխելի ֆոնդերի կառավարման մշակույթի ստեղծման, զարգացման և ամրապնդման համար:

Անձեռնմխելի ֆոնդեր ունեցող բուհերն իրենց ռազմավարական կառավարման գործընթացներում կարող են առավել վստահելի ու կայուն ֆինանսական ներհոսքի հնարավորություններ ստեղծել՝ միտված սեփական գործունեության արդյունավետության բարձրացմանը, ներառյալ կրթական ծառայությունների և գիտական գործունեության որակի բարելավմանն ու ռազմավարական առաջնահերթությունների իրականացմանը: Արդյունքում գիտահետազոտական մրցունակ միջավայրի համար հատկացվող ֆինանսավորումը կարող է մեծանալ՝ խթանելով գիտահետազոտական աշխատանքերի բարձր որակը: Բացի այդ, գիտական անձնակազմի՝ գիտահետազոտական գործունեություն ծավալելու շահագրգռվածությունը կարող է նույնպես բարձրանալ: Նշված փոփոխություններն իրենց հերթին կարող են նպաստել նաև համալսարանների գիտահետազոտական անձնակազմի կողմից գիտական պարբերականներում և հանդեսներում տպագրվող աշխատանքների ընտրության ավելի բարձր պահանջների առաջադրմանը և առողջ մրցակցության աճին: Ավելին, ՀՀ բուհերում գիտական հետազոտությունների խթանման տեսանկյունից անձեռնմխելի ֆոնդերի արդյունավետ գործառույթն ու շարունակական զարգացումը կարող են լուրջ փոփոխություններ առաջացնել մի շարք հիմնախնդիրների լուծման գործընթացներում: Համակարգային ու ինստիտուցիոնալ հիմնախնդիրներից են՝

- կրթության ու գիտության համակարգերի ինքնագոյատևում առանց պետական թիրախային ու լայնածավալ ֆինանսական աջակցության,
- համալսարանների ֆինանսական ինքնավարության ու ֆինանսատնտեսական գործունեության սահմափակում ՀՀ կառավարության կողմից,
- գիտության ֆինանսավորման ցուցանիշների նվազում և ֆինանսական կայունությունն ապահովող կառուցակարգերի ոչ թիրախային գործառույթ,
- պետության և հասարակության իրական կարիքներից կրթության ու գիտության համակարգերի վերացարկում և ոչ թիրախային կապ,
- մասնագիտական կրթության շրջանակում որակավորումներին առաջադրվող պահանջների անտեսում և ՀՀ ՈԱՇ-ի տարբեր մակարդակների նկարագրիչների թերի հաշվառում,
- ՀՀ-ում ժողովրդագրական ցուցանիշների անկում և իր բացասական ազդեցությունը գիտական անձնակազմի թվի վրա,

- բարձրագույն կրթության ու գիտության համակարգերի ոչ համընթաց զարգացում/դանդաղ արձագանք գլոբոլ ժամանակակից փոփոխություններին,

- կրթական ծրագրերում նորարարական մոտեցումների և ժամանակակից ՏՀՏ-ների ոչ բավարար կիրառում,

- գիտության մրցունակության չափման ու գնահատման կառուցակարգերի բացակայություն,

- մասնավոր ոլորտի ներգրավվածության թույլ մակարդակ որակյալ կրթության ու գիտության գործընթացներում,

- պրոֆեսորադասախոսական և գիտահետազոտական կազմերի բարձր տարիքային ցուցանիշներ,

- երիտասարդ մասնագետների, ներառյալ տաղանդների կառավարման անարդյունավետ համակարգ և արտահոսքի քանակական ցուցանիշների աճ,

- աշխատաշուկայի, կրթական ծառայությունների և գիտահետազոտական գործընթացների անհամապատասխանություն,

- հետազոտությունների հրապարակայնացման հարցում առաջացող ֆինանսավորման խոչընդոտները, որոնք հնարավոր է լուծել անձեռնմխելի ֆոնդերից ստացվող եկամուտների որոշ մասն ուղղելով բուհերի գիտական պարբերականների և հանդեսների ֆինանսավորմանը:

Անձեռնմխելի ֆոնդերը հետազոտական համալսարաններին հնարավորություն են տալիս մեծացնելու ռազմավարական, մասնավորապես նաև գիտահետազոտական նպատակների իրականացման ու գործառնական խնդիրների լուծման համար նախատեսվող ֆինանսական միջոցների չափաբաժինը: Նվիրատուների/ նվիրաբերողների կողմից անձեռնմխելի ֆոնդերում կատարվող ներդրումների ծավալը տարբեր է՝ պայմանավորված բուհերի կազմակերպարավական ձևով, գործունեության ոլորտային առանձնահատկություններով և իրավական կարգավորումներով: Այդուհանդերձ, այդ ներդրումները համալսարանների համար դառնում են ֆինանսավորման լրացուցիչ կարևոր աղբյուր, որի միջոցով այդ հաստատությունները կարող են նաև ընդլայնել իրենց սոցիալական գործունեության շրջանակը:

Հետազոտական համալսարանների անձեռնմխելի ֆոնդերի եկամուտները կարող են աճել նաև ներդրումային արդյունավետ քաղաքականության և ինստիտուցիոնալ ռազմավարությունների իրականացման շնորհիվ: Այս պատճառով մեծ անձեռնմխելի ֆոնդ ունեցող որոշ բուհեր ներդրումների կառավարումն արտապատվիրում են մասնագիտացված կազմակերպությունների ու կառավարիչների, որպեսզի հնարավորինս ավելացնեն ներդրումների վերադարձելիությունը: Անձեռնմխելի ֆոնդերի



բավարար եկամուտների պարագայում համալսարանները կարող են հետազոտությունը խթանելու նպատակով ներդրումներ կատարել նաև բուհական գիտահետազոտական կենտրոնների (ներառյալ համալսարաններին կից ուղեղային կենտրոնների) բացման, հետազոտությունների իրականացման և անհրաժեշտ նյութատեխնիկական պայմաններ ստեղծելու համար: Արդյունքում համալսարանները երկարաժամկետ հեռանկարում կարող են բարելավել իրենց գիտակրթական և գիտահետազոտական միջավայրերը:

Համալսարանների կրթական ու գիտահետազոտական միջավայրերի բարելավումն ուղղակիորեն պայմանավորված է դրանցում մասնագիտական գործունեություն ծավալող անձնակազմի կատարողականի ցուցանիշներով: Հետևապես, անհրաժեշտ է ներդրումներ կատարել հետազոտական գերազանցության այն կենտրոններում, որոնց գիտական անձնակազմը ցուցաբերել է բարձր մասնագիտական որակներ՝ զարգացնելով առկա մտավոր ու գիտական ներուժը և ուժեղ կողմերը, հետազոտության և նորարարության բնագավառներում հասել է չափելի արդյունքների:

ՀՀ բարձրագույն կրթության ոլորտի և բուհերի ֆինանսական կառավարման համակարգի բարեփոխումները խթանող հայեցակարգի մշակմամբ և իրականացմամբ պետք է նաև ամրապնդել սոցիալական հավասարության ապահովման հիմքերը՝ մշակելով այնպիսի քաղաքականություն ու գործիքակազմ, որոնք կօժանդակեն ցածր եկամուտ ունեցող ընտանիքների և տարբեր թիրախային խմբերի անդամների ներգրավվածությունը բարձրագույն կրթության և գիտական ոլորտներում: Այսուհանդերձ, պետք է արձանագրել, որ վերջին 20 տարում համալսարանների ֆինանսավորման կամ ֆինանսական կայունության ապահովման տեսանկյունից ոչ մի էական կամ շոշափելի արդյունք չի գրանցվել:

Այսպիսով, հետազոտական համալսարանները ցանկացած երկրի գիտելիքահենք տնտեսության ու մտավոր կապիտալի զարգացման, հետևապես նաև բարձրագույն կրթության և գիտության ոլորտների բարեփոխումների առանցքային գրավականներից են: Հետազոտական համալսարանները հիմնականում պետության կողմից ֆինանսավորվող պետական հաստատություններ են, որոնք նպատակաուղղված են երկրի կրթության, գիտության և արտադրության համակարգերի շղթայակցմանը: Սեփական գիտահետազոտական գործունեության արդյունքների ներդրմամբ հետազոտական համալսարանները դառնում են ոչ միայն իրենց ռազմավարական կառավարման, կրթական ու գիտահետազոտական որակյալ ծառայությունների մատուցման և ինստիտուցիոնալ մի շարք խնդիրների լուծման անմիջական մասնակիցներ, այլ նաև ազգային մակարդակում կրթություն-գիտություն-հետազոտություն-արտադրություն շղթայի կապն ամրապնդելու գործառույթն իրականացնող առանցքային դերակատարներ:

ՀՀ-ում մրցունակ գիտահետազոտական միջավայր ստեղծելու, գործառելու և արդյունավետ գիտական հետազոտություն իրականացնելու կարևոր նախադրյալներից է գիտական անձնակազմի, հատկապես երիտասարդ գիտնականների խրախուսումը, թիրախային ուղղորդումն ու նրանց գիտահետազոտական աշխատանքների ղեկավարումը: ՀՀ-ում հետազոտական համալսարանների ստեղծումը կարող է զգալիորեն խթանել բարձրագույն կրթության և գիտության համակարգերում իրականացվող բարեփոխումները, որոնց շրջանակում կշեշտադրվեն գիտելիքահենք տնտեսության զարգացման և թիրախային ոլորտներում բարեփոխումների ակտիվացման համար գիտահետազոտական արդյունքները ներդնելու հանձնառությունները:

### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂՔՅՈՒՐՆԵՐ

1. Law on "Higher and Postgraduate Professional Education" of the Republic of Armenia (62-N, 14.12.2004).
2. Khachatryan R. On Exigency of Research Universities in the RA Educational System. Yerevan State State Linguistic University after Brusov, Education Management, Banber 2(22), 2012, 42-53.
3. American Academy of Arts and Sciences 2015. Public Research Universities: Why They Matter. The Lincoln Project: Excellence and Access in Public Higher Education, Cambridge, MA.
4. Hanover Research 2014. Building a Culture of Research: Recommended Practices. Academy Administration Practice.
5. Sadlak J. & Cai L. N. (Editors) 2009. The World-Class University as Part of a New Higher Education Paradigm: From Institutional Qualities to Systemic Excellence. UNESCO European Centre for Higher Education. Shanghai Jiao Tong University, Cluj University Press.

## **ЗНАЧИМОСТЬ ЭНДАУМЕНТ-ФОНДОВ НАУЧНО-ИССЛЕДОВАТЕЛЬСКИХ УНИВЕРСИТЕТОВ В КОНТЕКСТЕ ПЕРСПЕКТИВНОГО РАЗВИТИЯ ОБЛАСТИ НАУКИ РА**

**РОБЕРТ ХАЧАТРЯН**

---

*Государственный университет имени В. Я. Брюсова*

---

В статье обсуждается стратегическая важность создания и функционирования эндаумент-фондов в исследовательских университетах. Такие фонды могут обеспечить непрерывное развитие исследовательской среды, необходимой для выполнения качественных исследований в вузах РА и стабильности финансовых ресурсов. В этом контексте, подчеркивая необходимость эффективных решений финансовых проблем, в данной статье обсуждается как вузы РА могут значительно повысить уровень финансовой стабильности и эффективность финансового управления путем создания и функционирования эндаумент-фондов.

**Ключевые слова:** исследовательские университеты, эндаумент-фонды, финансовое управление в вузах, финансирование высшего образования, научный персонал.

## **THE SIGNIFICANCE OF ENDOWMENT FUNDS AT RESEARCH UNIVERSITIES IN THE CONTEXT OF PROSPECTIVE DEVELOPMENT OF THE SCIENCE SECTOR IN THE RA**

**ROBERT KHACHATRYAN**

---

*Brusov State University*

---

This article discusses the strategic importance of establishing and functioning endowment funds in research universities. Such funds can ensure the continuous development of the research environment necessary to realize qualitative research at RA universities and the stability of financial resources. In this context, highlighting the need for effective solutions to the financial problems of the HEIs, the current article discusses the means through which the RA HEIs can significantly increase the level of financial stability and efficiency of financial management by establishing and operating endowment funds.

**Keywords:** research universities, endowment funds, financial management of universities, financing of higher education, financing of science, research staff

*Ներկայացվել է խմբագրություն 20.10.2021  
Երաշխավորվել է տպագրության 25.11.2021*